№ 20 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 14 ՄԱՅԻՍԻ 1894 № 20

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Ցայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրիկի կոնդակը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակութեան լուսաւորութեան միջոցներից մէկը. Նեմակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սով Թիւրքաց Հայաստանում. Արտաքին լուրեր.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.

ՀԱՅՐԻԿԻ ԿՈՆԴԱԿԸ

„Այժմ Թողած ամեն բան, աղքատնի-
„ռու համար կը խորհիմ. սոված ժո-
„ղովրդեան համար կը խորհիմ: Եւ այս
„հրաւէր կարդամ քեզ, ժողովուրդ Հա-
„յոց, որ դու էլ պահ մի Թողուս ամեն
„բան եւ միայն աղքատին համար
„խորհիս, որպէս զի ԴաւԹի եւ Ցի-
„սուսի երանութեանց արժանի լինես“:

—

„Շաւղի“ ընԹերցողները կարդացին անցուշտ Հայրիկի կոնդակի մէջ, որ մենք հրատարակեցինք մեր անցեալ Թուի մէջ իբրև յաւելուած, այդ պարզ և սրտաշարժ բառերը: Մեզ ևս զարկեցին այդ բառերը և ցնցիչ ազդեցութիւն ունեցան, իսկապէս ինչ են մեր բոլոր ազգային գործերը, մեր բոլոր վիճաբանութիւնները, հասարակութեան մտաւորական զարգացումը մի քայլ առաջ տանելու մասին, այն բոլոր խնդիրները որոնք կազմում են մեր հասարակութեան մտազբաղումը, բաղդատելով այն գերագոյն խնդրի հետ—„Հաց չունինք“:

Ամբողջ Կարսի և Երևանի նահանգը ողողուած է գաղԹականներով, որոնք անօԹի զաւակները առած իրանց գիրկը եկել են հաց՝ մուրալու: Յիսուն հազար հոգի նուաղում են քաղցածութիւնից, և Հայրիկը, հայոց պաշտած Հայրիկը, այսօր դիմում է իւր ժողովրդին „այդ կարօտած խեղճերուն փշրանքներ մատակարարելու համար“:

Ո՞չ ապաքէն իրաւունք ունի Հայրիկը հրաւէր կարդալու մեզ. „Որ դու էլ պահ մի Թողուս ամեն բան և միայն աղքատին համար խորհիս“:

Արդեօք հայոց ժողովուրդը լսելու է անօԹիների ձիչը, որ խօսում է Հայրիկի բերանով. ԹէՀ մի անգամ ևս հաստատելու է այն ցաւալի իրողութիւնը ԹէՀ մենք միայն ցոյցեր անել գիտենք և ոչ ԹէՀ գործ:

„Շաւիղը“ դիմելով իւր անձուկ շրջանի ընԹերցողներին, գլխաւորապէս պարսկահայերին, յիշեցնում է նորանց որ նոքա չեն մի անջատ մարմին, զբաղուած միայն իրանց ներքին խնդիրներով, այլ կազմում են մի մաս այն տառապեալ ժողովրդի որ այսօր հաց է խնդրում:

Մենք միշտ ախորժանքով յիշում ենք այն գեղեցիկ գործունէութիւնը որ պարսկահայերը ցոյց տուին տաճկահայաստանի անցեալ սովի ժամանակ, առատապէս մասնակցելով Սովելոց Ցանձնաժողովի բացած հանգանակութեան: Մենք միշտ մտաբերում ենք մի երկու փոքրիկ դէպք որ մեզ յիշեցնում են „աղքատ կնոջ լուման“: ԹէՀրանի մէջ յանձնամ նորակազմ ԸնԹերցանիրաց ընկերութիւնը նուիրեց այդ հանգանակութեան իւր բոլոր դրամագլուխը, ԹէՀ մեծ բան չէր այդ—միայն 20 Թուման: Մենք յիշում ենք նաև մի աղքատ պառաւ կին որ գաղտնապէս բերեց յանձնեց սովելոց ԹէՀրանի մասնաժողովին, իւր բոլոր հոգեբաժինը—մի քանի Թուման միայն—խնդրելով որ իւր անունը չը յայտնուի: Ժողովրդի այդ կարեկցութիւնը իւր համանմանների վիճակին մի փառաւոր բան է, մի մխիԹարանք է այն եսամոլութեան հանապազօրեայ տեսարաններից որ մարդ տեսնում է ամեն րոպէ:

Արդեօք պարսկահայերը աւելի յառաջադիմել են, ԹէՀ յետադիմել են այդ բարոյական շաւղի մէջ—կարեկցութիւն դէպի համանմանները: Այդ ցոյց կը տայ մեզ նոցա վարմունքը այս պարագայի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԼՈՒՍՈՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՄԷԿԸ

II.

Իրերի, բնական երևոյԹների և նոցա ներքին և արտաքին զարգացման պատմական ընԹացքի վերայ զննական հայեացքով նայելով՝ ակներկայելի կերպով մենք կը համոզուենք այն ճշմարտութեան, ԹէՀ բնականապէս ամեն մի նոր շարժումն, նոր միտք, նոր գաղափար և նոր գործունէութեան ձեռնարկութիւն իւր սկզբնական, սաղմնային դրութեան մէջ խիստ ԹոյլԹ անզօր է լինում. բայց հետզհետէ աճում, զարգանում և ընդլայնւում է, նայելով ԹէՀ ինչպիսի հանգամանքների մէջ, նպաստաւոր՝ ԹէՀ անանպաստ, ծնունդ է առել և առաջադիմութեան որքան ընդունակութիւններ ունի: Հետևապէս, ամեն մի նորոդութեան—հանրօգուտ նախաձեռնութեան վերայ ազդում են մի քանի ոյժեր— մթնոլորտը, շրջանը, ոգին, տիրող հասարակաց կարծիքն ու վերաբերմունքը և, վերջապէս, յղացողի, ձեռներեցի բարոյական և մտական կորովը, արիութիւնը, յանդգնութիւնը կամ ընդհակառակն:

Որ և իցէ շէնք շինելու համար, որքան պահանջւում է ճարտարապետական հմտութիւն վարպետից, նոյնքան և գուցէ աւելի, պահանջւում է նիւԹերի յարմարակազմութիւն, առատութիւն և շինել տուողի պատրաստականութիւն, այդ բոլոր ոյժերի միացած գործադրութիւնից առաջ է գալիս, գոյանում է մի շէնք: Հէնց այս միևնոյն տեսակ օրէնքով էլ բարոյա-մտական աշխարհի մէջ զարգանում են բոլոր ձեռնարկութիւնները և գաղափարները:

Ճշմարիտ է, սակայն, որ այս զարգացման գործը խիստ դժուարանում և յետաձգւում է շատ անգամ, մի քանի պատճառներով, երբ բոլորովին նոր, հիմնական կերպով պէտք է սկսել մի գործ,

տեղի է ունենում սաստիկ մոլեգին պայքար, նորը հանդիսանում է ապառաժացած հնին և սրուում է կատաղի ընդհարումն, որի երկարատևութեան պատճառով նոր գործի ընդհանրանալը ժամանակաւորապէս ընդհատուում է, բայց այդ խիստ վաղանցիկ է։ Շուտով լուսաւոր նորի վերջնական յաղթութիւնը ըստիպում է խաւար հնին տեղի տալ, գլորուիլ կործանման անդունդը։

Մի այնպիսի քիչ զարգացում ունեցող ժողովրդի մէջ, որպիսին է պարսկահայ ժողովուրդը, մի որ և իցէ նոր գործ սկսել և առաջ տանել անասելի կերպով դժուար է, և մինչև, որովհետև չը կայ հասարակական գիտակցութիւն և համերաշխ գործունէութիւն։ Պարսկահայը երբ մի որ և է, գործի փոքր ինչ նպաստում է, դորդնով այնչափ հպարտանում զուռզանում է, որ պահանջում է, որ ամբողջ ազգն իւր ուրած այդ աննշան նպաստի համար գերիվերոյ ստորագրութիւններով զարդարուած հռչակէ իրան և մինչև, որովհետև նա այնքան ագէտ է, որ չէ կարողանում ըմբռնել իւր անհատական մարդկային պարտքերը դէպի իւր ընկերը, նա իրան մեծ բարեգործ, մարդասէր է համարում։ Հասկանալի է, ուրեմն, որ բարոյական սկզբունքներից և ամենատարրական կրթութիւնից զուրկ ճնաւորմպէս բոլոր մի հասարակութեան մէջ գործել սրչափ անպատեղի է և յուսահատեցնող՝ այնպէսի գործիչների համար, որոնք անդրդուելի և հաստատակամ ոչ Ֆամոզմանների ցնդախտութիւն չունին, որոնք բուռն հաւատք չունին դէպի խօսքի ոյժը։

Այսպիսի անհաստատ հանգամանքներով ծանրացած և բարդակոն որոշ կրթութիւնից, բաղձալի փեմ սկզբունքներից և իդեալական ձգտումներից զուրկ մի հասարակութեան մէջ պէտք է գործել,—գործելու կոչուած է մի թոյլ, խրախուսանքի կարօտ մամուլ։ Դա պէտք է կրթէ, դիտակցութիւն, Դենքնաճանաչութիւն զարգացնէ, հասարակական կարծիքներ լրացնէ և պէտք է նորանց ուղղութիւնը տայ, — ահա այն բարդ, բազմահոգմանի, փշալից դերը, որ պատանդնել է մեր նորաբուլբոյլ, դէպի ընդհանուր, հանրամարդկային առաջադիմական դուռին տանող փոքրիկ „Շաւիղը“, նորաբիլիթի ծիլը, որը, թէև ըստ երևոյթին, լոկ Մի գիէրաթեկ բարունակ, շիւղ է երևում, բայց հիմնաւորուած է հաստատուն կերպով, իրան ամրակից, նուազցիչ ունենալով լայն, անանձնական ուղղութիւն և սկզբունքներ, լուսաւոր, հանրամարդկային բարոյական գաղափարներ։

Օրօրքը միշտ լեռարգիական քնի, յաւիտենական թմրութեան է առաջնորդում, ծոյլ ընդարմացած մարմնին մըտրակ և խթան է հարկաւոր։

Թ.

Դաւրէժ 1894 թ.

(կը շարունակուի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դաւրէժ 14 ապրիլ 1894

Որովհետև մենք պարսկահայերս այժմ ունինք մեր բերան եղող սեղհական օրգանը, մեր հասարակական կեանքի ներկայացուցիչ „Շաւիղ“ շաբաթաթերթը, որ իւր մասնաւոր ուշադրութեան առարկայ է դարձրել պարսկահայերիս կեանքը, դորա համար ես որոշեցի „Արմենիայի“ 53-րդ համարում հրատարակուած մի լօդուածի վերայ, որ ուղարկուած է Խոյից, մի քանի դիտողութիւններ տնել "Շաւղի" միջոցով։

Պ. լօդուածագիրը ի միջի այլոց գրում է, եօթը տարի է որ տեղիս ուսուցիչը դասատուութիւն է անում, բայց մինչև հիմա մի աշակերտ չի ունեցել, որ կարողանայ հասարակ կարգալն իմանալ։ Տարին ստանում էր 7 թուման... խոյեցիք սրանից աւելին չէն կարող տալ, որովհետև շատ աղքատ են, հազիւ կարողանում են իրենց ապրուստը հոգալ։

Նախ եօթը տարի չէ, որ նա ուսուցչութիւն է անում, այլ չորս, և այդ ընթացքում ի՞նչպէս կարող էին խեղճ սաները մի բան սովորել, քանի որ նորա գլխաւոր ցաղափարն էր "Խոնարհեցո Սարեցո"-ով շլացնել պարզ, միամիտ և կրօնամոլ ժողովրդի աչքերը, որոնք կրթութիւն, գիտութիւն ասած բանը կարծում են թէ սահմանափակւում է եկեղեցական երգեցողութեան մէջ, իսկ միւս բաները, ասում են թէ սատանայական են։ Եւ երկրորդ ժողովուրդը այնքան աղքատ չէ, որքան կարծում է պ. լօդուածագիրը, որ չը կարողանայ գոնէ 30 թումանով մի ուսուցիչ պահել։ Քանի տարի առաջ նոյն ժողովուրդը, որ դեռ աւելի աննպատակ կերպով էր վարուում կրթութեան գործի հետ պահում էր իւր սեպհական վարժապետը 30 թումանով, նրանից յետոյ 82 թումին ունէր դարձեալ մի ուրիշ վարժապետ, որին վարձատրում էր նոյն չափով։ Այսպիսի փոքրերից երևում է, որ ոչ թէ ժողովրդի աղքատութիւնից է կախուած ուսուցչի չը վարձատրուիլը, այլ նոյն իսկ ուսուցչից, ահա թէ ինչպէս։ Երկու տարի առաջ հենց այդ ուսուցիչը, որի մասին խօսում է պ. լօդուածագիրը, ստանում էր 20—30 թուման. բայց երբ թեմիս առաջնորդը մի լաւ ուսուցիչ ուղարկեց խոստայաւ բաւականանալ չափաւոր առճիկով, նա դուրս գալով զանազան լուրեր ապրպծեց միամիտ ժողովրդի մէջ և գրգռեց նորանց նոր ուսուցչի դէմ, որը տեսնելով նորա արարքը, որ ուզում էր մի կերպով գլուխ պահել մինչև ծերացած քահանան մեռնի և ինքը ձեռնադրուի քահանայ և Սալմաստի տեսչի անուշադիր լինելը, որի կարծեմ պարտականութիւնն էր և նոյնպէս թեմիս առաջնորդի, ստիպուած լետ քաշուեց, ապարէզը թողնելով կրկին հնին։ Ահա այդ եղաւ նորա 7 թուման ստանալու պատճառը. որը վճարում էին, ոչ թէ բոլոր մարդիկ, այլ մէկ երրորդը, իսկ մնացածները, որովհետև չէին համակրում նորան ոչ ինչ չէին տալիս։ Այդպէս շարունակուեց մինչև երկու տարի և վերջապէս նա էլ զանազան հանգամանքներից ստիպուած թողեց քաղաքը և հեռացաւ գիւղը։

Այժմ քաղաքում եղող 100 տուն հայերը առանց ուսումնարանի են, թեմիս առաջնորդի ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ կէտի վերայ, որ կարելի է դիւրութեամբ հաւաքել 30—35 թուման և եկեղեցիների ունեցած 200 թ. էլ օգտակար կերպով ծառայեցնել նոյն նպատակի համար, փոխանակ մի քանի շահամոլների գոհելու. էլ ինչու ուսումնարանը առանց ուսուցչի մնայ։ Երբոր Սալմաստի ընդհանուր տեսուչ է նշանակում մի անձ, չէ որ նոյն պէտք է լինի նորա մի առաջին ուշադրութեան առարկան (որովհետև նոյի դատաւորի ձեռքով է կառավարուում և Սալմաստը)։ այդ վայրի մինչև այսօր ուշադրութիւնից զերծ մնալը, մեզ համարմի դժնդնիք է։

Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհափառ Հայրապետը 8 մարտ թուականով մի կոնդակ է ուղարկել Պ. Պէյոյ պատրիարք ամենապատիւ Խարէն, երբապանը հրաւիրելով նորա ուշադրութիւնը հայ գաղթականների վերայ, որոնք Բազրևանդից, Մուշից և Տաճկաստանի այլ ձեռերից գաղթել են դէպի Լուսիա նոյն գաւառների մէջ

տիրող սարսափելի սովի պատճառով։ Վեհափառ Կաթուղիկոսը յորդորում է պատրիարքին միջնորդ և բնարեխոս լինել առ Բ. Դուռն, ժողովրդի այդ աղիողորմ վիճակին վերջ դնելու համար, քանի որ այդ գաղթականները միայն առ ժամանակեայ կերպով թոյլատրութիւն են ստացել բնակուիլ Ռուսաց սահմանագլխի գաւառներում, և գարնան վերադարձին՝ այդ խեղճ սովալլուկները պէտք է վերադառնան կրկին այն սովատանջ գաւառները ուրտեղից գլուխ առած գաղթել էին։

—

Դավրէժից մեզ հաղորդում են։ „Սէր ընկերութիւնը, որ մինչև այժմ միայն մի ուսուցիչ ունէր Սալմաստ գաւառի Մահլամ գիւղում, այն էլ այս օրերս ինչ ինչ պատճառներով հրաժարուել և եկել է այստեղ։ Բայց մենք մեծ ակնկալութիւններ ունինք „Սէր“ ընկերութիւնից։ Ցուսով ենք որ այդ թարմ կազմակերպութիւնը, եթէ ոչ ամբողջ պարսկահայերի, գէթ Ատրպատականի հայերի կրթական գործին ապագայում մի մեծ զարկ պէտք է տայ, ի հարկէ երբ աշակցութիւնները ամեն կողմից չեն զլանալ“։

—

Նոյն տեղից մեզ հաղորդում են որ, Սովուչբուլաղի Դարաշաք գիւղում ասատիկ աղքատութեան պատճառով քրդանում է մի հայ աղջիկ։

—

Ցանկալի էր որ Թէհրանի ազգային ամեն կարգի հաստատութիւնները մի բոպէ թողնելով իւրեանց զբաղեցնող հարցերը և մոռանալով իւրեանց ներքին վէճերը, միահամուռ ջանքով աշխատէին մի կանոնաւոր հանգանակութիւն բանալ Հայաստանի Սովելոց օգտին։ Հրաւիրում ենք նոյնպէս Պարսկաստանի այլ քաղաքների ազգային հաստատութեանց ուշադրութիւնը նոյնպէս աշակից գտնուելու։

—

Անցեալ շաբաթ օր Էնթէզամէ-Սալթանէի գեղեցիկ պարտէզում, որ լիշեալ յարգելի անձնաւորութիւնը բարեհաճութեամբ դրել էր Ռաֆֆի ընկերութեան դրամագրութեան ներքոյ, նոյն ընկերութիւնը տուաւ մի գեղեցիկ դաշտահանդէս Օսմանեան դեսպան Վ. եմ. Ղալիբ քէլի հովանաւորութեան ներքոյ։ Հայ և Եւրոպական հասարակութիւններից կար բազմաթիւ մի խումբ։ Նուագում էր կազակների երաժշտութիւնը, մասնաւոր ուշադրութիւն էր դարձուած բուֆէտի վերայ, և առ հասարակ հանդէսը գուարճալի դարձնելու համար ոչինչ չէր խնայուած։ Մուտքը եղած է, որպէս լսում ենք մօտաւորապէս 250 թուման իսկ ծախսերը 113 թ.։ Ամեն գովեստի ըժանի է Ընկերութեան տնօրէն ըժիշկ Բազիլի նախաձեռնութիւնը իւր կազմակերպած գեղեցիկ հանդէսի մասին։

—

Ռաշտից մեզ հաղորդում են հետևեալը։ Պարսից „Իրան“ ամսաթերթի № 823-ի մէջ Ռաշտից մի լուր է հաղորդուած, որպէս թէ մի հայ երիտասարդ ինքնակամ գնում է մէսչիդը, կամք է յայտնում ընդունելու մահմետական կրօնը, բայց նորա եղբայրը, նորա այդ վարմունքը, բացատրում է նորանով, որպէս թէ խելագարուած է. և մեսչիդից հանելով կամենում է ուղարկել Եւրոպա։ Այս դէպքը այսպէս է եղել։ Մի երիտասարդ ֆիրահարւում է մի օրիորդի վերայ, բայց ծնողքը չեն յօժարում նորան ամուսնացնելու։ Վերջը երիտասարդը ցնորւում է, և մէկ օր այդ երիտասարդը, գնում է իրանց տան մերձաւոր մէսչիդը և սկսում է „Սուրբ Աստուած, սուրբ և հզօրը“... երգել, որան հարցնում են թէ ինչ է կամենում, նա պատասխանում է, որ կամենում է կրօնափոխ լինել։ Մի ամբողջ գիշեր մէսչիդում մնալուց յետոյ, երկրորդ օրը նորան ներկայացնում են կրօնապետին, որին, նա միևնոյն խօսքերով դիմում է որպէս թէ կամենում է կրօնափոխ լինել։ Մինչև կէս օր այդ ցնորուած երիտասարդը իւր խօսքի վերայ հաստատ մընում է, իսկ կէս օրից յետոյ, սկսում է հայհոյանքներ թափել իւրեան շրջապատող մարդկանց վերայ։ Կրօնապետը, կանչում է իւր մօտ ցնորուածի եղբօրը և հրամայում է նորան հեռացնել այն տեղից, միևնոյն ժամանակ ապսպրելով որ եթէ կրկին խելքի գայ և կամենայ մահմետական կրօնքը ընդունել, ոչ ոք նրան արգելք չը լինի, և այդ ցնորուած երիտասարդին այս քանի օրերս տարան Բագու և ոչ Եւրոպա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(„Մշակից“ արտատպում ենք հետևեալ յօդուածը)

ՍՈՎ. ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Թիւրքաց Հայաստանի ծանր վիճակի մասին նոյն իսկ Կ. Պոլսի լրագիրները տիսուր փաստեր են հաղորդում։

Ահա թէ ինչ են գրում, օրինակ, Զմշկածագից „Աւետաբեր“ լրագրին. փետրվարի 25-ից. «գործ չը կայ, շահու միջոցներ կը պակսին։ Պանդխտութեան ճանչ զացողներէն անգործութեան լուրեր կուգան։ Անողոք երաշտութիւն մը զաւառիս հունձերը փչացնելով տհաւոր նոպանով մը քարին։ Ուր որ դառնաս այրիղ կը հանդիպին տիսուր և նեհար դէմքեր, որոնց վրայէն արտասուաց կայլակներ կը հոսին՝ այն ինչ մշերմաբար խօսիլ փորձես իրենց հետ։ Շատ կը վախցուի որ արդէն բաւական թուով անձինք մնուած ըլլան գիւղերն անօթութենէ և բազումք ևս կը մնանին, եթէ օգնութիւն չը հասնի։ Կարողութեան տէր անձինք սովորաբար առնմատէճ կոչեցեալ իրենց չքնաղ ազգականներուն, ինչպէս հոս կարող անձինք շատ նուազ են։ Նեղութիւնը ու չքաւորութիւնը պատճառ եղած են գիւղերէն ոմանց քաղաքային պարպուելուն։ Ս. Օման և Ընդրկան գիւղերում բոլոր հայք աշունը ամեն բան ծգելով անցան Խարբերդի դեղտոր առանց ի նկատի առնելու առջևնին ծմեռն ունենալու դժուարութիւնը»։

«Զիւնը մարտ 16-էն 18 վերատին տեղացած է մեծ քանակութեամբ ի Տիատին և Կարինի նահանգին զանազան կողմերը։ Տեղ տեղ մի չիւ երկու մետրը բարձրութեան հասած է։ Արմուտքի և խստի պակասութենէն մարդիկ և անասուններ մեծապէս կը նեղուին։ Ճամբաներեր զոցուած են և քանակին՝ իրենց գիւղերէն դուրս չեն կրնար ելնել։ Կարնի Այնթապ գաւառակին մէջ 10 օրէ ի վեր շարունակ տեղացող ձիւնը հալելով մեծ ոնգեյ մը առաջ բերեր եւ ապեստալի ոդողումներ պատճառեր է։ Բաւական շէնքեր վնասուեր են։ Մարդու կեանք չէ եղած սակայն։

«Աբլուշկերտի մէջ ևս մեծ քանակութեամբ ձիւն տեղացեր է, իր հաղորդակցութիւնը ամեն կողմէ կտրուեր է։ Աբլուշկերտէն մեկնող սուրհանդակը ընտրուեր է եռ դառնալ, երկու ժամ ի զուր ջանալով ճամբայ մը դտնել ձիւներուն մէջէն։

«Վանի Աղբակ-կաւառակն ալ ձիւնով ծածկուած է, տեղ տեղ երկու մետր բարձրութեամբ։

Կարինի Իւրէնլի գիւղսիմբին և Հասան Գալէի միջև երեք ճամբորդ ձիւնի բռնուելով, ենթայտ եղեր են։ Այդ դժբաղդներէն մէկուն դիակը գտնուեր է. բայց միւս երկուքը գտնել անկարելի եղեր է»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—„Մուրճ“ ամսագիրը խօսելով այն նուէրների մասին (25610 ր.), որ ցարդ ուղարկուած են Էջմիածին, անում է հետևեալ շատ իրաւացի դիտողութիւնը։ „Այս ասելուց յետոյ մեզ մնում է միայն զարմանալ ստացուած գումարների փոքրութեան վերայ, որը ոչ մի կերպ պատիւ չի կարող բերել Հայոց ազգին, որը Վեհափառ Հայրիկի արժանավայել և փառաբեր ընդունելութիւններով՝ ամբողջ աշխարհին հասկացնել տուեց իւր պատրաստականութիւնը մեծ զոհաբերութիւններ անելու։ Խրիմեան Հայրիկը տեսել է ոչ թէ հազարներ, այլ հարիւրաւոր հազարներ դեռ ևս Կաթուղիկոս չընտրուած։ Եւ միայն պատիւ է բերել Նորան այն գործադրութիւնը, որ Նա արել է իբր սոսկ վարդապետ, եպիսկոպոս և արք-եպիսկոպոս, իբր առաջնորդ և պատրիարք“։

—„Մշակից“ քաղում ենք հետևեալ լուրերը։ Ապրիլի 21-ին, Թիֆլիսի առեղծ-

նորփարանում կայացաւ մի ժողով, որը զբաղուեց սովեալների օգտին Թիֆլիսի հայերի մէջ հանգանակութիւն անելու հարցով։ Որոշուեց իւրաքանչիւր եկեղեցու ծխականների մէջ հանգանակութիւն անելու. հիմամբ նրա ծխականներից ընտրել երկու կամ երեք մարդ և յանձնել նրանց ժամանակաւոր մատեաններ։ Դրա հետ միասին կազմուեց այն մարդկանց ցուցակը, որոնք պէտք է սկսեն ժողովարարութիւն անել։ Ժողովին հրաւիրուած էին 58 հոգի, բայց ներկայ էին միայն 17 հոգի։ Լսում ենք, որ ժամավիներում մատեանները արդէն պատրաստուած և յանձնուած են եկեղեցիներում նշանակուած անձանց։ Տարաբաղդաբար, մի քանի հոգի յետ են ուղարկել առաջնորդին մատեանները, հրաժարուելով հանգանակութիւն անելուց։

—Թիֆլիսի առևտրական բանկը վճռել է 3000 ր. ուղարկել Վեհափառ Կաթողիկոսին սովեալների։

—Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում տիկինների և օրիորդների մի խումբ ներկայացրել է Բարեգործական ընկերութեան խորհրդին 770 ր., որը հանգանակուել է նոյն սովեալների։

—Պարսից կառավարութիւնը, որպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, այս օրերս հրատարակեց ռուս ճանապարհային և ապրանքների տեղափոխութեան համար հիմնուած ընկերութեան պայմանագիրը։ Այդ ընկերութիւնը կը գործի Էնզելի-Թէհրանի և Թաւրիզ-Թէհրանի միջև եղած տարածութեան վերայ։ Ընկերութիւնը մտադրութիւն ունի վերոյիշեալ ճանապարհների վերայ շինել ապրանքների մշտական պահեստներ, կընդունի ռուս և պարսկական ապրանքների տեղափոխութիւնը երկու ուղղութեամբ և այլն։ Ընկերութեան հիմնադիրներն են Մոսկվայի դրամատէրերը։

Թէհրան 14|26 մայիս 1894

Դրամական արժէքը (Բորսա)

		դրամ	շահի
Պարսկական	20 ղ. էշրէֆին արժէ	32	—
»	10 » » »	16	15
»	5 » » »	8	—
Ռուսական	Ռուբլին (արծին) »	39	—
»	Մանէթը (ռուբ.) »	5	6
Անգլիական	Լիրան »	48	—
Ֆրանսիական	Ֆրանկը »	2	1
Տեղական	Մէջիդիէն »	45	10

Գին

Աբեղեանեանց-Հրատարակիչ Անդրէասեան Եկեղեանցարեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՐԱՖՖԻ

ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Հայրիկի պատկերով

ՐԱՖՖԻ գրքերից ցանկացողները կարող են դիմել ուղղակի հեղինակ այրին, Որին հասցէն է. Тифлисъ АННА РАФФИ

Շուտով լոյս կը տեսնի „ԶԱՀՐՈՒՄԱՐ“ անտիպ և մեծ աշխատութիւնը։

ՇԱԲԱԹՆԱԿԻՈՒՄ Է

„ԱՂԲԻՒՐԻ և ՏԱՐԱԶԻ“

ՆԵՐԿԱՅ ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ԱՂԲԻՒՐԻ բաժանորդագիրը առանց պրեմիաների 3ր.

ՏԱՐԱԶԻՆԸ 6 ռուբլանոց Tiflis. Réd. „Agbiour et Taraz“.

ՈՎ. ԴԱՄԵՆՈՒՄ ՍՏԱՆԱԼ 8 ՊԱՏԿԵՐ ԻՐԻՆԻ ՊՐԻՄԻՈՒՄ, ՊԷՏՔ Է ՈՒՂԱՐԿԵԼ ԵՒՍ 5 ՐՈՒԲԼԻ.

Խմբ. Հրատ. Տ. Նաճարեան

ՎԱՃԱՌԻՈՒՄ Է Ն

ՐԱՖՖԻ ԵՒ Ա. ՊԱՏԿԱՆԵՆՑ ԴԱՄԱՌՈՒԹԻՒՆ

ՄԵԾԱԳԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Իւրաքանչիւրի գինն է ճանապարհածախսով

40 *կ. զուտ արով ցանկացողներին գիջում և կը տրուի;*

Тифлисъ, Саркису Согомонянцъ *կամ* Tiflis, Sarkis Sogomonian

ԿՈՐՅՐԵԼԵՄ

Դավրեժի ք. վիճակախաղի տոմսերից **2** *հատ*

№ № 0265, և 0568

Գտնողին կը վարձատրեմ

Հասցէն՝ Քաշտ Ալեքսանդր Յովսէփեանց։

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատունում Լայէզար փողոցում Թէհրանում. տասն թումանաչափ եւ աւելի գնողի համար, սովորական արժէքից գիջում կը տրուի։ Գիշեր ժամանակում եւս դեղատունը բաց է։